

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ, ՆՇԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՈՒՆԻՍԱԿՅՈՒԹԻՒՆ

Ի բաւական ժամանակաց հետէ ամուսնական կենակցութեանց մէջ տեսնուած ինչ ինչ զեղծումք և խանգարումները Ա.Ե.Տ. Հայրապետի խորին ուշադրութեան ենթարկուելով ինչպէս ի 1869 ամի, նոյնպէս ներկայ տարուոյս մէջ հետեւեալ Առնդակաւ՝ առաջին Առնդակը և Արքադրութիւնը ևս կցելով՝ յանուն Արևիկի առաջադրեց և պատուիրեց ամուսնութեան և նշանադրութեան համար կանխաւ պէտք եղած զգուշութիւնները և կարգադրութիւնները տնօրինել:

Յիշանս ամուսնական կենակցութեան տրամադրած նուիրական պարտաւորութիւնքը ո՛րքան ծանրակշիռ և վսեմ են, նոյնչափ ևս կարեւոր է կանխաւ ամեն նախազգուշութիւն և հնարաւոր ապահովութեան եղանակները մատակարարել և գործադրել, և որովհետեւ նշանադրութիւնը ամուսնական կենաց նախադրանք և գլխաւոր կէտն է, պէտք է որ նոյն ժամանակէն և գործողութիւնէն սկսեալ ողջամիտ և ազատ պայմաններ միջոց տան երկուց նշանելի երիտասարդաց (անձանց) գիրար ճանաչելով՝ ինքնայոժար հաւանութեամբ և անկեղծ սիրով ընդ միմեանս նշանուելոյ և պսակուելոյ՝ և ոչ թէ բուրովին ծնողաց կամաց զերի կամ նոցա շահամոլութեան \*) մի առարկայ դարձնե-

լով՝ նիչպէս որ Հայաստանի շատ տեղեր դարձած կերեխն, որով բռնութեամբ նըշանեալքն և պսակեալքն չեն կարող երբէք սիրալծորդ ամուսնիք լինել և ամուսնական օրինաւոր և խաղաղ կեանք վարել, ուստի և բազմիցս դառն հետեւանքներ կճանին և կտեսնուին, և ահա այս ամենի առաջքը ըստ կարելոցն սուկոյ համար Ա.Ե.Տ. Հայրապետ հետեւեալ Առնդակներով առայժմ պէտք եղածը կարգադրել սուտ է, զորս պարտք կը համարիմք հաղորդել նաև ի տեղեկութիւն և ի զգուշութիւն սիրելի և Հայկազուն եղբարց մերոց:

Այս ամուսնական խնդրոյ վերայ ի պատեհ ժամու առանձին մի յօդուած կհրատարակուի:

Ահաւասիկ Առնդակներն:

Պատճէն Առնդակի Ա.Ե.Տ. Հայրապետի յանուն Արևիկի է 4 էն Գոնիէն 1875 ամի՝ ՈՒՅԻՎ, ընդ համարաւ 179:

Ապաքէն քաջայայտ պարտի լինել ամենից, զի մին ի գլխաւորագոյն անտի էական պայմանաց յարատեւութեան մարդկայինս սեռի և իւրաքանչիւր ազգի առանձինն՝ համարի իրաւամբ բնական և Աստուածային օրէնք սակա ամուսնական կապակցութեան առն և կնոջ ընդ միմիանս, և ի

բինակ սովորութիւն է և ինչպէս թրքերէն բառ լինելէն ևս, կհասկացուի զի թորքերէն և քրտերէն անձանցուած մի սովորութիւն է:

Ի տեղիս տեղիս ուշադրանք անուամբ մի սովորութիւն ևս կայ, որ ի զարդ ճակատու հարսնացուին միակէտը (մի դերձանի կամ նեղ ժապաւենի վերայ շարուած քիչ կամ շատ ոսկիներ) կըտան և ուշադրութեամբ կտեսնուի թէ և բառական բունը նշանակութեամբը գլխաւոր կամ գլխային և կամ գլխաւոր է:

(\*) Պատճէն կամ ուշադրանք անուամբ եղբոր կողմէն էն, կամ 50 էն ց100 և աւելի որք զրամներ ստանալով փեսացուէն որ ստարամուտ մի տարո-

սոցին սիրալիր միաբանութենէ, յանխառով կե-  
 նակցութենէ և ի քաջ իմացողութենէ զըրբազան  
 պարտս ամուսնութեան՝ ապահովեալ հաստատի  
 յաւետ ցանկալին խաղաղութիւն յանձնիր գեր-  
 դաստանի և սոյն ձոխանալ նրկական և բա-  
 րոյական ամենատեսակ լիութեամբք. ուստի առ  
 անվրէպ հասանելոյ բարոյական վախճանի ամուս-  
 նութեան՝ հարկ ի վերայ կայ զի լինի այն իւրա-  
 բանչիւրոցն՝ կամաց ազատութեամբ և կատարեալ  
 հաւանութեամբ առանց ստիպողական ինչ մի-  
 ջոցաց ի կողմանէ ազգականաց և այլոց. քանզի  
 որ բունութեամբ կատարի արտաբոյ գոյով բնա-  
 կան կարգի օրինաց, ոչ կարէ բնաւ ժամանել իւ-  
 րումն նպատակի:

Սորին վասն ահաւասիկ երանաշնորհ Առա-  
 քեալք և Հայրապետք Սրբոյ Եկեղեցւոյ ուս-  
 եալ ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ՝ ըզ-  
 հին օրինաց զղաշն կապակցութեան առն և կը-  
 նոջ իմաստութեամբ բարձրացուցին ի կարգ սրբ-  
 բազան խորհրդոց Եկեղեցւոյ՝ անլուծանելի հրա-  
 շակեալ զյապն ամուսնութեան ցմահ ամուսնակ-  
 ցացն ըստ Տէրունեան բանին թէ, «զոր Աստուած  
 զուգեաց մարդ մի՝ մեկնեցէ», որում պատկառ-  
 եկաց ի դարաւոր ժամանակաց հետէ Հայաստա-  
 նեայցս Սուրբ Եկեղեցիի գիտելով քաջ զիմաս-  
 տութիւն և զարդարութիւն Քրիստոսալիր պա-  
 տուիրանին՝ և զանցառութեանն որ անտի զբազ-  
 մալնաս հետեւանս ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ  
 բարեկենդանութեան, Եւ թէպէտ յասոջ քան  
 զմեր գահակալութիւն պատահեալ են օրինակք  
 ինչ բաժանման միոյն յամուսնացիւր առ ընկերին  
 կենդանութեամբ, բայց գիտել պարտ է զի նախ  
 քան զայն՝ Ազգի մերում ի կողմանէ Եկեղե-

ցական Պաշտօնէից Սուրբ Եկեղեցւոյս զսոցիս բը-  
 նաին երբէք չէր լծողատրեալ ումեք եղծումն  
 կանոնի միութեան բարոյական անձնաւորութեան  
 ամուսնացիւրց, Եւ պատճառ մեղանչելոյ ընդդէմ՝  
 նուիրական կանոնիս այսորիկ անշուշտ այն է զի  
 ոչ հանապաղ՝ որպէս հարկն պահանջէ՝ ըստ օրի-  
 նի լիակատար ազատութեամբ կամաց իւրաքան-  
 չիւրոց և սկզբանց գործադրի խորհուրդն պակի  
 առանց կանխաւ օրինաւոր նշանադրութեանս յոր-  
 մէ բնականապէս յառաջ գան յետ ամուսնու-  
 թեան կատարման՝ սրտունջք և անմիաբանու-  
 թեան դառն արդասիք յընտանեկան կենցաղա-  
 խարութեան, որով փոխանակ երջանկութեան՝ ա-  
 մուսնութեանն կապ դառնայ յաղբիւր արտաս-  
 ուաց և պէսպէս տարաբաղտութեանց: Հարկ ի-  
 ցէ արդեօք աստէն նշանակել զայլ բազմապատիկ  
 զանցառութիւնս որք զաղտագողի և յանխոր-  
 հուրքս կատարին ի տեղիս տեղիս՝ նկատմամբ հա-  
 սակի, առողջութեան, արեւակցութեան և այլոց  
 բարոյական կատարելութեանց՝ որոց միանգամ  
 յամուսնութիւն մտանել յօժարիցին: յոյր սակս  
 ազգալնաս հետեւանացն օր ըստ օրէ յաճախեալ՝  
 սպառնն ըզֆիզիզական բարօրութիւն սիրեցեալ  
 որդւոցս Հայաստանի:

Եւ արդ՝ գուն գործելով մեր ըստ Արքազան  
 պարտոց Հայրապետական պաշտամանս մերոյ՝  
 հաւատարիմ աւանդապահ լինել սրբազան կար-  
 գաց և կանոնաց Հայաստանեայցս Ազգախառ  
 Սուրբ Եկեղեցւոյ՝ և ընդ նմին ոչ գտանիլ անիոյթի  
 ի ինամս մատակարարելոյ ի Տեառնէ հաւատա-  
 ցեալ մեզ Հօտին զհարցաւոր առիծս բարո-  
 յական և ֆիզիզական վերակենդանութեան զոյդ  
 ընդ մտաւորականին զարդացման՝ կարեւոր յոյժ  
 համարիմք ընդ ձեռն Սինօզիդ դարձուցանել ըզ-  
 խորին ուշադրութիւն Գերապատիւ Առաջնոր-  
 դաց և Յաջորդաց ի վերայ այսր մեծի և սրբ-  
 բազան խորհրդոյ ամուսնութեան՝ իրրե ի վե-  
 բոյ անլուծանելի շարկալի խաղաղ և անզոր  
 կենակցութեան առն և կնոջ մինչև ցլախճան կե-  
 նաց նոցին. և ըստ այնմ ընդ ձեռն նոցին պար-  
 տաւորել զամենայն քահանայս և զհոգեւոր իշ-  
 խանութիւնս՝ որ ընդ տեսութեամբ Թեմական և  
 Հոգեւոր կառավարութեանց գտանին՝ յանվրէպ

Վասն տեղեր ևս որ՝ բաց ի օժիտէ՝ հարսնացուին  
 կողմէ՝ բաւական ընձանիր կամ կալուածք և կամ  
 դրամ՝ կարուի փեսացուին, և այս սովորութիւնը  
 առաւել կամ նուազ քաղաքակրթեալ տեղերում  
 և կողմերում անգամ ընդհանրանալ սկսած է,  
 որոց դեմ պէտք եղածը կանօրինութի ժամանա-  
 կին.

կատարումն յետագայ կանոնաց ըստ հետեւեալ բանաւոր պատճառաց՝ ի դիւտ ամուսնական երջանկութեան և սղգային բարեկեցութեան. Եւ նախ՝ քաջ իմիտ առցնն քաշանայք և ժողովարդք զի ամուսնութիւնն է առն և կնոջ ընկերակցական անվասիճան միաւորութիւն ազատութեամբ և հաւանութեամբ երկոցունց եղեալ, զոր միայն մահն կարէ լուծանել. Ապա ուրեմն ի ժամ՝ նշանադրութեան, որ խորհրդաւոր մասն համարի տաջակայ ամուսնութեան՝ ուշ կայցի խոստովանահայր քաշանայն այնմ՝ թէ՛ արդարև յօժարամիտ սիրով՝ և ազատ կամօք ցանկա՛ն ընկերակցութեան հարսնացուն և փեսայացուն եթէ յոչ կամաց կամ՝ յարտաքին ստիպողական ինչ պատճառաց յայն բերեալ իցեն բռնութեամբ Երկրորդ՝ առ քաջ ըմբռնումն բարոյական խորհրդոյ ամուսնութեան՝ ընկերակցական երջանկութեան և առտնին խաղաղութեան՝ պարտ է ցանկացողայն ամուսնութեան լինել շափահաս. վաւրն որոյ քաշանայից է գործ՝ խնամ՝ ունել կատարեալ շափահասութեան պակեկեանցն. քանզի անշափահասութիւնն խանգարման լինի պատճառ բնութեան կարգի և օրինաց. Երրորդ՝ վասիճան ամուսնութեան զոյով միանգամայն լրումն յաւիտենական կամաց Արարին, որ ասաց. «Աճեցէք և բազմացարուք և լցէք զերկիր,» ապա ուրեմն հաւասարապէս պարտք են և՛ քաշանայից և՛ ժողովրդոց, այն է՝ ծնողաց հարսին և փեսային՝ անաչառ մտօք ի նկատի ունել զպայման առողջութեան երկոցունց և ս կողմանց առ խափանելոյ զպատճառ ստպտանաց պակեկեանցն յապագային և տարաբաղութեան յամբողջ ընթացս կենաց միոյն կամ միւսոյն. ըստ որում՝ անլուծանելի է պատկն մինչև ցմահ միաբան կենակցութեամբ. Եւ չորրորդ՝ Հայաստանեայց սուրբ Եկեղեցի իրաւամբ և արդարութեամբ արգելու զամուսնութիւն արենակցաց և մերձաւոր ազգականաց, քանզի և ըստ փիլիզական պայմանաց առողջութեան ի վնաս յոյժ համարի ապագայ որբոց և սերնդոց նոցա.

Գործադրութեամբ չորեցունց այսոցիկ Եկեղեցական Անունաց ինամով և ճշդութեամբ, յորս պարունակին այլ և ս առանձին կանոնք փոխադարձ պարտուց ամուսնացելոցն ընդ միմիանս՝ հը-

նար է զառաջըս առնուլ բազմատեսակ արկածից ամուսնական և ընկերական թշուառութեան, յորում բազումք ի ներկայումս տաղնապին և օր քան զօր բազմանան կարտ, տկար, թափաւր յառաքինութենէ և յառաքինական գործոյ ընտանիք նաև ի մերումս Ազգի և իրրու թէ ոչ համարելով բաւական զառիժս թշուառութեան և մեղաց, որում ի կրեանք ի կրեանց տուեալ են պատճառ անհեռատեսութեամբ ըմբռնեալ նորասիրութեան անտիւ, հետամուտ լինին ի ձեռս բերել զայն՝ որ Հայաստանեայց Եկեղեցւոյ վարդապետութեամբ և բնութեան ճշմարիտ օրինօք՝ իրաւամբ է խափանեալ, այն է՝ լուծումն պատկի, որ ըստ ամենայնի սուրբ է և անլուծանելի. Ապտբէն ոչ ինչ զօրեացն ստնանել կանոնաց Սուրբ Եկեղեցւոյս անօրինացն վարք և ընթացք, որք բաժանել նկրտեն ի միմիանց թեղադրութեամբ ապականեալ բարուց իւրեանց, և բազում՝ այն է՝ զի որք տարաշխարհիկ կեանս վարեն վատութեամբ և անառակութեամբ, թիրևս անգէտ զոյով այնմ, զի Եկեղեցին՝ որ ըզկապն ամուսնութեան անլուծանելի քարոզէ, նոյն Եկեղեցին ոչ զարտեացէ ի քարոզելոյ նաև զԱստուածային արժանահաս պատիժս աստ և ի հանդերձելումն, որ հասանելոցն է ի վերայ պղծողաց զՔրիստոսադիր օրէնս ամուսնութեան.

Չայտոսիկ ամենայն միջոցաւ Սննդիդ յուշ անծելով Գերապատիւ Առաջնորդաց և Յաջորդաց՝ և ընդ ձեռն նոցա՝ ամենայն քաշանայից և ժողովրդոց՝ կամիմք լիպոյս լինել, զի ոչ պակասեցին առ ի նոցունց կողմանէ եռանդուն ջանք փութոյ և յօժարամտութեան առ արդեւաւորելոյ զանթերի կատարումն այսոցիկ բարոյական սկզբանց ի վիճակս վիճակս՝ ի գործ արկանելով և զքարոզութեան համոզողական միջոց և խրատս և ազգաբարութիւնս ի ժողովրդեան. քանզի որ հայն յօգուտ ընդհանուր Ազգի՝ անստերիւր պահպանութեան կանոնաց Սուրբ Եկեղեցւոյ Հայաստանեայց, այն պարտի քաղցր և անորժիլի իմն պարտք համարիլ ամենեցուն եկեղեցականաց և աշխարհականաց միանգամայն, ի լրումն Աստուածային կամաց, որով մարդն վասն ընկերական վիճակի երջանկութեան ստեղծաւ և Պատկն ի Տեառնէ մերմէ Քրիստոսէ անլուծանելի քարոզեցաւ. Արեւրո յոյժ

Համարիմք յաւելու և զայն զի վասն նշանադրութեան արդէն սահմանեալ է մեր զկարգ և ըզկանոն տպագրեալ Կոնդակաւ մերով յամին 1869: և ընդ ձեռն Փոխ՝ — [Թեմակային Երևանայ և Յաջորդաց Աղիքսանդրապոլու՝ Նախիջևանու և Տաթևու՝ ևս և Գործակալութեանց Էջմիածնայ՝ Երևանայ և Նոր-Պայաղիտու գաւառաց արդէն տարածեալ է ի նոսա սահմանագրեալն առ ի մէջ կարգ նշանադրութեան: Իսկ վասն մնացեալ վիճակաց պատուիրիմք Սինոդիզ փութով առաքել ի տպագրեալ Կոնդակացն յայնցսնէ յիւրաքանչիւր Թեմական Ատեանս Հայոց Ռուսաստանեայց թերթս 100ական, բաց յԵրևանայ վիճակէն, — յորում արդէն եղեալ է պատշաճականն կարգադրութիւն՝ — և յԱրցախոյն՝ — որոյ Գերապատիւ Առաջնորդն աստէն ընկալեալ է ըստ չափու կարեւորութեանն թերթս՝ և ըստ այնոցիկ կարգադրեալ է վարել ամենայն գործակալաց վիճակին: — Ըզթերթսն զայնտոյիկ հասուցանել առ իւրաքանչիւր Գործակալս վիճակաց Թեմական Ատեանից է գործ պատուիրելով նոցա յայսմ հետէ ըստ այնմ հըրահանգութեան վարել ի ժամ նշանադրութեան: Ընդ նմին Սինոդն պարտի պատուիրել յատկապէս Թեմական Ատեանից և Հոգևոր Կառավարութեանց, զի տացնն ամենայն գործակալաց զտուժար վասն արձանագրելոյ ի նմա զնշանադրութիւն ըստ ամենայն հանգամանաց, որպէս տեսնի յորինակին որ ընդ սմին առաքի. և ապա յետ լրման որոշեալ միջոցի նշանադրութեան՝ շքնորհել զհրաման Պսակի ըստ սահմանեալն կարգի՝ համարելով անվաւեր զայնտոյիկ հարսնախօսութիւնս՝ յորս չիցն պահեալ ծնողք կամ պսակելի անձիմք զայս կարգ՝ յօգուտ ինքեանց՝ և չնն գնացեալ ի նշանակեալ կեդրոնատեղիս և արձանագրեալ ի Տումարին զանուանս փեսայացուին և հարսնացուին ամենայն հանգամանօք հանդերձ ծանօթութեամբք զհաճութենէ նոցին և զհաւանութենէ առ իմտանել ազատ կամօք յառաջադրեալն ամուսնութիւն պահպանելով զբառական իմաստ նաև վերոյիշեալ չորեքունց կանոնաց որ ի սմա. և զգործադրութենէ կանոնաց նշանադրութեան յամենայն ամի ստանալ զտեղեկութիւն ի Թեմական Ատեանից և ի Հոգևոր Կառավարութեանց:

**Ի 1869 թուականին տուեալ Կոնդակի և նշանադրութեան կարգադրութեան պատճէնքն ևս հիտուեալներն են:**

Իքննելն մեր ըստ պարտուց Հայրապետական պաշտաման զկարգս և զկանոնս երանաշնորհ Նախնեացն մերոց՝ գտանեմք զայնս հաստատեալս յուղղութիւն Քրիստոնէական սուրբ հաւատոյ մերոյ և բարեկարգ վայելչութեան մերս Եկեղեցոյ: Քանզի նախնիք մեր ձեռն իգործ արկին կարգաւորել զԵկեղեցին ըստ Աստուածային աւանդութեանց և օրինաց, և զայս միայն կալան նպատակ զի յամենայնի ճշմարտութիւն Կրօնի բացայայտ երեւեցի, այլ նաև առիթք անկարգութեանց, որք զհետ բերին զխնկարումն բարոյական սրբութեան զինուորեալ Եկեղեցոյ՝ բարձցին ի միջոյ և սէր և ի սղաղղութիւն թաղաւորեսցէ ի ժողովրդեանս:

Մին յայսպիսի կարգաւորութեանց ճանաչի և կարգադրութիւն նշանադրութեան. զի որք միաւորիկ կամիցին սուրբ ամուսնութեամբ, կայն և երիտասարդն, նախապէս յայտնեցնն զհաւանութիւն և զհաճութիւնս իւրեանց առաջի դատաւարաց եկեղեցոյն, և այս ոչ վայրապար, այլ կարի իմն խորհրդական օրինաւորութեամբ. որպէս զի զիտասցնն ամենեքեան զհամահաճ կամեցողութիւն նոցա առ միմեանս և ճիշտ խոզարկութեամբ հասու լինիցին ամենայն հանգամանաց, եթէ օրինաւոր իցէ և ներքէն արդեօք օրէնք և պատուիրանք քրիստոսական եկեղեցոյ կատարել զամուսնութեան զխորհուրդք, և չիցէ ի նոսա մերձաւորինչ հոգևոր կամ մարմնաւոր ազգականութիւն:

Եւ այս սահմանեցաւ՝ զի մի՛ յանգէտս ժողովուրդք մեր հակառակ Եկեղեցական օրինաց խօսելով զինամութիւն՝ մեղիցին, և իժամ հարսանեաց ի յայտ եկեալ մեղանքն՝ խոտովութեանց նոցա և զեղծմանց բարեկարգութեանց եկեղեցոյ լինիցին պատճառք:

Երբ՝ ցաւիմք յոյժ, զի զբարեկատակ և ըզսուրբ սովորութիւնս զայս տեսնեմք ի ժամանակիս յայսմիկ փոխարկեալ յանկարգ սովորութիւնս. որով առանց յայտնելոյ եկեղեցական իշխանութեան և առանց կանխաւ վերահասու լինելոյ օրինաւորութեան և ապօրինաւորութեան

առաջիկայ ամուսնութեան, առնեն զին ամուսնութիւնս և զպատրաստութիւնս հարսանեաց, և ոչ սակաւ դժուարութիւնս հաննն յապագային ի քննութիւն գործոյն աշխատ ատենելով զեկեղեցական Իշխանութիւնն: Զի յորժամ՝ ըստ չ'ներկայ կանոնացն եկեղեցւոյ հարկադրի Հոգևոր Իշխանութիւնն արդիւր զամուսնութիւն այնպիսեացն, խռովութիւնք և անպատահելիութիւնք ոչ սակաւ յառաջ գան ի նախատինս սրբութեան եկեղեցւոյ և լընդվայր աշխատութիւն այնոցիկ՝ որք զհետ լինին յօրինաւորութիւնս մուծանել զեղիայն ապօրինաւորութիւն:

Արդ՝ մեք ընտրեալ գտնով ի Հոգւոյ՝ սրբոյ վերակացու լինել ամենայն ուղղութեան կարգաց և պաշտպան օրինաց եկեղեցւոյ ըստ սրբազան պատաւորութեան մերում՝ անհրաժարելի հարկ համարեցաք՝ առ ի բառնալ ի միջոյ զշարինս, որք յառաջ գալ կարեն յապօրինի ամուսնութեանց, մերով այսու Հայրապետական Առաջակաւ հրատարակել վերստին զկարգ նշանադրութեան համաձայն նախնի կարգաց Սրբոց Հարց Հայաստանայց Եկեղեցւոյ՝ ի գիտութիւն ամենայն Ազգիս Հայոց, և պատուիրել յանուն Աստուծոյ՝ ամենայն Առաջնորդաց և հոգևոր Ատենից՝ հսկել արթնութեամբ անթերի կատարման ի սմին նշանակեալ կանոնաց:

Յանկալի էր մեզ սահմանել՝ զի ուր նշանելիքն իցեն, անդ և նշանադրութիւն լինիցի. բայց քանզի ինչ ինչ պարագայք խախտարարք գտան մերումս նպատակի վասն որոյ առայժմ՝ առ զիւրութիւն ժողովոցոց մերոց և կարգադրութեանս յօրինաւոր կատարումն՝ արժան դատեցաք զկեղրու նատեղին նշանադրութեան սահմանել կիսով և կամ միով ժամու հետաւորութեամբ իշրջակայ տեղեաց՝ նշանակելով անդ զերկուս անձինս՝ մին ի քահանայից Գործախու անուամբ՝ և միւսն յաշխարհականաց Գանչաղեօ անուամբ, և զիւրաքանչիւրոցն զպատրաստութիւն և զպաշտօն նշանակելիք ի գիտութիւն նոցա և ամենեցուն:

ՊԱՇՏՈՆ ԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՆԱԿՆԵՐ

Գործակալ քահանայի պաշտօնն է յեկեղց ի նշանադրութիւն տեղեկանալ ընդ Գանձապետի թէ երկրքին սպ ինքն տղայն եւ աղջկն հաւան իցեն միտեանց, թէ

քանի ամաց իցէ տղայն եւ քանի ամաց աղջկն, կամ չամահանաք իցեն. թէ չիցեն ի միջի մերձաւոր ազգականութիւն կամ խնամութիւն, կամ կնքահայրութիւն եւ կամ այլ ինչ արգելք, թէ հաճեալ իցեն ծնողքն նոցա ամուսնութեան եւ երբ ունին առնել զհարսանիսն, եւ թէ լինին երաշխաւոր կամ վկայ՝ եթէ վաք այլ ինչ արգելք օրինականք եւ այլն:

Երկրորդ պաշտօն Գործակալի է. յետ ընդունելոյ Գանձապետի զհոգեբաժին անուանեալ նուէրս, գրել առ ծխական քահանայս հանգուցելոց կատարել զծօթ նօրեայ կարգն:

ՊԱՇՏՈՆ ԳԱՆՁԱՊԵՏԻ

Պաշտօն Գանձապետի է նախ՝ յաւուրս նշանադրութեան անպատճառ ներկայ գտանել իսենեկի եկեղեցւոյ ընդ Գործակալ քահանայի, եւ իմիասին քննել ըզպարագայս նշանադրութեան: Երկրորդ՝ ընդունել զարուստս արդիւնս ի հարսանեաց եւ զհոգեբաժին ի ննջեցելոց՝ եւ գրել ի ժապաւինեալ տումարս ամենայն հաւատարմութեամբ: Երրորդ՝ յիւրաքանչիւր ամիսս զգոյացեալ գումարն հասուցանել ի Սինօզն յայտարարութեամբ:

ԿԱՆՈՆԻ ՆՇԱՆԱԿՐՈՒԹԵԱՆ

- ա) Նախ քան զնշանադրութիւնն հարկ է ծնողաց կամ ազգականաց նշանելեաց յայտնել ծխական քահանայիցն զգիտաւորութիւնս իւրեանց, Յորոց իւրաքանչիւրն պարտի երթալ առ խոստովանորդիս իւրեանց՝ այս ինքն՝ քահանայ աղջկան առ աղջկն, եւ քահանայ տղային առ փեսայացուն, եւ առանձինն լսել ի բերանոյ նոցին զկատարեալ հաւանութիւն իւրեանց ի մտանել յամուսնութիւն: Եւ ապա ժողովեալ քահանայից իմի վայր ընդ մերձաւոր ազգականաց նոցա պարտին քննել թէ չիցեն արգելք ինչ օրինաւոր վասն նշանադրութեան. եւ յետ քննելոյն եթէ արգարել չըտանիցին պատճառք յապաղանաց՝ պատրաստեցին գնալ ի կեդրոնատեղին առ Գործակալն եւ Գանձապետն ի նշանադրութիւն:
- բ) Նշանն պարտի լինել նուիրմամբ միոյ մատանւոյ եւ եթէ իկողմանէ փեսայացուն առ հարսնացուն:
- գ) Յետ քննելոյ ծխատէր քահանայից եւ իմանալոյ զհաւանութիւն նոցա յամուսնանալ, առեալ զմատանին եւ անձինս երկու երկու ի մերձաւոր ազգականաց տղային եւ աղջկան՝ ի սահմանեալ աւուրս նշանադրութեան գնացեն առ Գործակալն եւ Գանձապետն դնել զնշանն:
- դ) Ժամանակ նշանադրութեան են ամենայն Ուրբաթ աւուրք, յոր պարտին Գործակալն եւ Գանձապետն պատրաստ գտանել իսենեակ եկեղեցւոյն՝ ունելով գտումար նշանադրութեան առ ի նշանակել ի նախնականս նշանելեացն:

ե) Նշանակելու Գործակալն ընդ Գանձապետին ի Լսելն ի բերանոյ ներկայից զբան նշանագրութեան, պարտին նախապէս զգուշաւոր եղանակաւ հարց եւ փորձ առնել ծխական քահանայից եւ ներկայիցն ըստ նշանակելոյն. եւ եթէ համաձայն իցեն օրինաց տուեալ վկայութիւնք նոցին, եւ չիք ինչ արգելք եկեղեցական. Գործակալ քահանայն առեալ զմատանին ի ձեռանէ քահանայի տղային՝ տայ քահանայի հարսնացուին տանել ի տուն աղջկան ի հաստատութիւն նշանեալ լինելոյ նորա, յետ որոյ արձանագրին անուանք նշանելեաց ի յատկացեալ սուամարի այսպէս:

« (Աբ-ժ Զ-յիւ-ն) ի հատակի (+-ն էրի-ն)

« ամաց նշանեցաւ ընդ (Զ-դիւ-ն Աբ-ժ-ն) զըս-

« տերն (Աբ-ժ-յ Թ-դիւ-ն), կոյս ընդ կուսի:

« (կամ այրի ընդ այրոյ):»

Ի վերջոյ պարտին ստորագրել քահանայք եւ եկեալ վկայք, եւ նշանակել զմիջոցն հարսանեաց: Համար արձանագրութեան պարտ է՝ տալ քահանայի փեսայացուին առ ի պահել առ ինքն, զի ի հաստեցանել զարտաճան հարսանեաց՝ յերումն ժամանակի ներկայացուցէ զայն Գանձապետին ի դերութիւն գտանելոյ ի տումարի գտեղին, եւ նշանակել այսպէս է « Պատկեցաւ ի (20 Փետրվարի 1875)»:

զ) Միջոց հարսանեաց յօրէ նշանագրութեան սահմանեալ է մինչեւ ցվեց ամիս. իսկ եթէ պատահեցին արդեւք ինչ, մարթ է ընդարձակել զմիջոցն յետ քննելոյ զօրինակորութիւն պատճառաց երկարաձգութեան:

ե) Եթէ նշանեալն ոք համարձակեցն յետս կոչել ըզնշանագրութիւնն, պարտի դիմել առ Առաջնորդն եւ կամ առ Յաջորդն. եւ եթէ իցեն պատճառք օրինաւորք եւ անհրաժեշտ իմն տեսանի քակել զնշանագրութիւն. հաճել զկամս խնդրատուին՝ առնելով ի նմանէ նուէրս յօգուտ որոց եւ այրեաց, ուսումնարանի եւ եկեղեցւոյ այնք տեղւոյ, եւ արձանագրել ի տումարի, ազդ առնելով միանգամայն առ Գործակալ եւ Գանձապետ կեդրոնատեղւոյն առ ի ընթել զանուանս նշանելոց ի տումարէ նշանատուութեան՝ յայտնելով զպատճառն յետս լինելոյ նշանագրութեան:

զ) Բաց ի յիշեալ նշանէն՝ արգելեալ է ի նշանագրութեանն տալ այլ եւս ինչ յերկոցունց կողմանց մինչեւ ցօր հարսանեաց. եւ եթէ հակառակ հրամանի եւ պատուիրանաց մերոց առնիցեն եւ ի յայտ գայցեն մեղանքն, նուիրեալ ինչք դարձցին ի նպատ որոց այրեաց, եւ ես չունիցի իրաւունք պահանջելոյ զայնս ի միմեանց:

թ) Թեմակալ Առաջնորդք փոյթ տարցեն խափանելոյ զռայլ ծախս ի նշանագրութեան եւ ի հանդես

հարսանեաց, եւս եւ զԲ-ՅԼԸԻ անուանեալ պահանջն՝ որ սովորութիւն եղեալ է ի իւրեւորայս Գանդի այս ամենայն ոչ միայն ի վնաս են նիւթականապէս աղ շատաց, այլ բազում այն է՝ զի զհետ բերեն խռովութիւնս եւ պատճառեն զքակտումն հաստատեալ նշանին:

ժ) Ի մերձեալ աւուրցն հարսանեաց՝ վեց կամ չորս աւուրքք յառաջագոյն ծխական քահանայքն պատրաստեն զՎկայական հրամանի հարսանեաց եւ ստորագրեն ի նմին ինքեանք եւ երեցփոխան գեղջն՝ Յետոյ քահանայն ընդ հօր փեսայացուին կամ ընդ միոյ մերձաւոր ազգականի նորին առեալ ընդ իրեանս զհամար արձանագրութեան նշանին դնան առ Գանձապետն ի վճարել զԱթոռահաս իրաւունս եւ ընդունել զԱնդորրագիր ի նմանէ:

ՕՐԻՆԱԿ ՎԿԱՅԱԿԱՆԻ

Ի ժողովրդենէ Հայոց (Կ-բէնէ-ն) զեղջ (Աբ-ժ Զ-յիւ-ն) նշանեալ ընդ (Թ-դիւ-ն-ն Աբ-ժ-ն) կոյս ընդ կուսի, (եւ կամ այրի ընդ այրոյ), կասին ամուսնանալ ընդ միմեանս ըստ համահաճ յօժարումեան իւրեանց. առ այս չլինելով արգելք ինչ յեկեղեցական օրէնս՝ ստորագրեմք:

Քննյ. փեսացուի.  
 (Գ-բէնէ-ն +-հ-ն-ն, Վ-բ-բ-ն-ն):  
 Քննյ. հարսնացուի.  
 (Զ-յիւ-ն +-հ-ն-ն, Ա-բ-ժ-ն):  
 Երեցփոխան  
 (Ղ-ն-ն Աբ-ն-ն):

ժա) Քահանայք եթէ առանց գիտութեան Գանձապետի եւ չընկալեալ տարկախն ի նմանէ զԱնդորրագրելուն վերոյիշեալ՝ յանդիմեցն կատարել զպատկն, ընդ պատճօք եւ ընդ տուգանք ենթարկին:

ՕՐԻՆԱԿ ԱՆԳՈՐԲԱԳՐԻ ԳԱՆՁԱՊԵՏԻ

(Պ-հ-ն Ն-բ-ն-ն) որ կամի ամուսնանալ ընդ (Որ-բ-ն-ն, Որ-բ-ն-ն)՝ կոյս ընդ կուսի, զմարեաց զԱթոռահաս իրաւունս հարսանեաց (Կ-ն) ռուրիս: Գանձապետն (Վ-ն-ն Աբ-ն-ն):

Արդ զայս ամենայն նախնական բարեկարգութիւնս վերտին հաստատելով, յայտնի իսկ է, զի բարձեալ է իմիջոյ Բարեկարգութեանդ անուն՝ որոց յանձնեալ գօրով ցարդ վիճակային կառավարութիւնն անուամբ և եկթ՝ ոչինչ արդիւնս և օգուտս ընծայէր բարեկարգութեան Եկեղեցւոյ

Թողալ զգարեկարգութիւնն եկեղեցեաց և այլոց վարել Առաջնորդաց անձամբ անձին, որոց սեպուհ պարտաւորութիւն է յամենայնի ինամ տանել ըստ Աստուծոյ անսեսութեանն:

Եւ մեր արթն առնեմք՝ զի ամենեքին լիցին ի շինութեան և ի պայծառութեան՝ ի քառս միոյն Աստուծոյ և ի պարծանս Ազգիս:

Ի ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ:

Ներկայ տարւոյս Յունիս 3 ամսաթուով Աոր - Ջուղայու Եմենափրկչեան Վանքէն՝ Առաջնորդական Փոխանորդ Երժ. Խաչատուր Վարդապետ Արապետեանի յանուն Վեհ. Հայրապետի ուղղած գրութենէն հեռեկալ պարբերութիւնքը քաղել և մերազնէից հաղորդել արժան և կարեւոր կհամարվիք:

Թէև գրութեան մէջ յիշուած որոգայթներն և ի տարածումն բողոքականութեան օտարաց ջանքերն կանխաւ քաջայայտ եղած են Վեհ. Հայրապետի մերում, զորս առաւել ընդարձակ տեղեկագրած է Գեր. Գրիգորիս Երբեպիսկոպոս Յովհաննէսեան, և արդէն (1872-3 թուականներում) պէտք եղած հրահանգները և հրամանները ստացած է, — և ի նդկաստան երթալոյ նպատակն ոչ եթէ միայն ի վտանգի եղող Հնդկահայոց այցելոյ և օգնելոյ համար, այլ նաև անդ կարեւոր դպրոցներ հաստատելոյ և այլ մի քանի ազգային հոգացողութիւնք և եկեղեցական կարգադրութիւններ տնօրինելոյ համար է, ինչպէս նաև Աոր - Ջուղայու Հայոց դպրոցաց համար եղած մի քանի կառկները ի կարգի դնելով ևս Համեստ. Գաղի Խալիս-նին Բրուս կոչուած և ծպտեալ բողոքական քարոզչին ինամոց անգիտութեամբ և միամտաբար յանձնած

դպրոցը ազատելոյ և այլոց և այլոց պիտի ծառայէ, և թե մին Առաջնորդ և Երբեպիսկոպոս լինելով՝ այս ամենի և այլ նպատակաց մէջ անշուշտ աւելի պիտի յաջողի և քան զայլս արդիւնաւոր կլինի՝ և ինչպէս ցարդ եղած փորձերէն այլ ևս տեսնուած է՝ թէ այլք հազու թէ զանչնս կխորհին, — բայց և այնպէս իխրախոյս վերոյիշեալ Վարդապետին զովկելով նորա եռանդը և ջանքը՝ արժան կհամարվիք հեռեկալ ծաղկաքաղը ինչպէս նաև յայտարարութիւնը և ցուցակը Երբոս ամսագրոյս մէջ հրատարակել:

Ի տեղեալ ծաղկաքաղէն նաև բանիմաց մերազնեայք կարող են նկատել, որ բողոքականք ժողովրդեան կրած տարաբաղտ և դառնագին վտանգից և ձախորդութեանց միջոցները յարմար առիթ գտանելով՝ Տարբար-Նի-նը բոլորովին տարբեր խմաստով և խորամանկութեամբք մի տարբեր և չար նպատակի միջոց ըմբռնած՝ կրտքնին միամիտ ժողովուրդը խաբել և պատրել՝ զնոսս ի բողոքականութիւն և յազգուրացութիւն հրապուրելով և զլրելով, այն մի քարեգործ-Նի-ն կաննն՝ բայց փոխարէնը ազգո-բացո-Նի-ն կիւթին, անկրօն-Նի-ն կամ հասարո-բացո-Նի-ն կսերմանեն, և ին. և ին: Այսպէս կպատուիրէ Տիեզերաց Փրկչի ճիշտ և Վրիստոս, այսպէս պիտի լինի Վրիստոնէութիւնն, այսպէս կուսուցանէ և կպահանջէ Ժողովուրդ-Նի-ն և Տարբար-Նի-ն: Վանի մեծ ոճիւր է ի ծովու խորասուզելոյ և խղրուելոյ վտանգի ներքև տաքնապող անձի նմանութիւն ունեցող անձանց նեղ վիճակում խոստանալ կամ անել մի օգնութիւն, բայց միևնոյն ժամանակ ջանալ՝ որ ազատելէ՞ զկնի Նրտ-